

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

Թ. Ա. ՂԱՐԱԳՅՈՒՅԱՆ

Հայերենի հնչյունական համակարգում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում թեև էական տեղաշարժեր տեղի չեն ունեցել և հնչույթների համակարգը մնացել է նույնը, այնուամենայնիվ որոշ, և՛ հեշտությամբ դիտվող, և՛ արտաքուստ աննկատելի փոփոխություններ առաջացել են: Այդ փոփոխությունների ուսումնասիրությունը շատ կարևոր է հայերեն դրական լեզվի արտասանության զարգացման ներքին միտումների բացահայտման տեսակետից: Փոփոխությունները վերաբերում են հիմնականում արտասանական նոր առանձնահատկությունների կամ նոր ունակությունների առաջացմանը, որոնք չեն շոշափում արտասանական կանոնների հիմքերը՝ հնչյունական համակարգը: Արտասանության մեջ առաջացած տեղաշարժերը վերաբերում են նորմային, քանի որ դրանք ոչ թե սակավադեպ հանդիպող և պատահական շեղումներ են, այլ արմատներ ձգած և բավականաչափ տարածված հնչյունական երևույթներ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սոցիալական նոր հարաբերությունների ազդեցությունը հայոց լեզվի զարգացման վրա բավական շոշափելի եղավ: Հայոց լեզվի ձևը բերած հասարակական մեծ կշիռը, գրի և գրականության լայն տարածումը, կրթական մակարդակի զանգվածային բարձրացումը իրենց կնիքը դրին և հայերեն գրական լեզվի արտասանության վրա:

Արդ, ինչպիսի՞ արտասանական նոր առանձնահատկություններ են դիտվում հայերենի զարգացման ներկա փուլում:

1. Հայոց լեզվին առհասարակ հատուկ չեն թե՛ բաղաձայնական և թե՛ ձայնավորների կուտակումները, այդ պատճառով գրության մեջ հանդիպող մի քանի բաղաձայններ հեշտությամբ արտասանվում են ը ձայնավորով կազմվող գաղտնավանկի միջոցով, իսկ ձայնավորների միջև սովորաբար մտնում է որևէ ձայնակապ: Այս ընդհանուր օրինաչափությունից ելնելով՝ բառասկզբի սկ, սպ, ստ, շա, շպ, գր, զգ հնչյունակապակցություններն արտասանվում են նախահոնը սուղ ը ձայնավորի միջոցով: Այս իրողությունը հավաստվում է մեր ժողովրդական երգերով և շափածոյով, որտեղ նախահոնը ը-ով կազմված վանկը հավասարակշռություն է ստեղծում բանաստեղծության շափում, պահպանելով ուրիշը: Օրինակ՝

Աչքերն հառած թանձր մութին, սրտատրոփ, անապաքեն՝
(ը)Սպասում եմ առավոտին, որ կռիվը շարունակեն:

(Չարենց, «Ամբոխները խելագարված»):

և կամ՝

Կեսօրն անցավ, էլ ինչ մնաց,
Օրը մոտ է մայրաժողովին,
(ը)Ստվերները կամաց-կամաց
Փաթաթվում են արահետին:

(2. Սահյան, «Կեսօրն անցավ»):

Կան նաև բացառություններ, այսինքն՝ նախահունչ ը-ի գործածության ազատություն, որը ավելի շատ դիտվում է նախասովետական պոեզիայում: Հովհ. Հովհաննիսյանի մոտ այդ բանը հաճախակի է հանդիպում, օրինակ՝ ստվեր բառը նա մի տեղ գործածում է որպես երկվանկ՝ (ը)ստվեր, մեկ այլ տեղ որպես միավանկ բառ (առանց ը-ի), մի տեղ՝ «Եվ ըսպասում ենք», մեկ այլ տեղ՝ «Եվ սպասում ենք...»:

Սկզբնահունչ ը-ի պահպանմանը նպաստում է և տողադարձի ժամանակ դրվող ը-ն:

Այս բոլորով հանգերձ, վերջին շրջանում բառասկզբի չգրվող ը-ն շարտասանելու ուժեղ միտում է նկատվում: Այդ միտումն առանձնապես զգալի է դպրոցականների և երիտասարդ ու միջին սերնդի շրջանում: Մենք հարցման և ձայնագրության միջոցով մի շարք փորձեր ենք արել, որոնց արդյունքը հենց այդ է հաստատում: Ո՞րն է դրա պատճառը: Նախ, ը-ի արտասանությունը որոշ չափով ազատ է եղել նաև հնում (այդ մասին վկայում են Ա. Այտընյանը, Մ. Աբելյանը և ուրիշներ), իսկ այդ երևույթի տարածմանը և խորացմանը նպաստել են արտաքին գործոնները:

Հայերենում այժմ լայն գործածություն ունեն վերոհիշյալ հնչյունակապակցություններով սկսվող օտարազգի բազմաթիվ բառեր և հատուկ անուններ, որոնք արտասանվում են ռուսերենի նմանողությամբ, գրեթե առանց ը-ի, ինչպես՝ սպորտ, սպիտ, սկեպտիկ, սկաֆանդր, շոսուտ, շոսուր. ստեռլինգ, ստրատեգիա, մանավանդ անձնանունները՝ Սպասկի, Սպաբակ, Շտրաուս, Մտրուվե, Շտոկման և այլն:

Փոխառյալ այն բառերը, որոնք վերցվում են մերձավոր շփման մեջ գտնվող լեզվից, երբեմն յուրացվում են արտասանական այնպիսի առանձնահատկություններով, որոնք հատուկ չեն փոխառու լեզվին: Արտասանական այսպիսի առանձնահատկությունները հաճախ նաև ազդակի դեր են կատարում:

Այստեղ, անշուշտ, մեծ դեր է կատարում և գրային արտասանության ընդհանուր միտումը, որի նշանակությունը բավականաչափ մեծ է հայոց լեզվի զարգացման ներկա շրջանում: Հետաքրքրական և կարևոր է այն փաստը, որ սփյուռքահայերի մեջ, որոնք ռուսերենի հետ սերտ շփում չունեն, այս տեղաշարժը ամենևին չի դիտվում. նրանք շատ պարզորոշ կերպով արտասանում են (ը)սպիտակ, (ը)սկսել, (ը)շտապ և այլն:

2. Հայերենում բառասկզբի երկու բաղաձայնները չեն կարող միանալ առանց ձայնավորի (բացառությամբ բաղաձայն յ կապակցության): Եթե դրությամբ ձայնավորը չի արտահայտվում, ապա արտասանության ժամանակ սկզբի երկու բաղաձայնների միջև մտնում է ը, օրինակ՝ մ(ը)շակ, ս(ը)խալ և այլն: Մինչդեռ այժմ լայնորեն գործածվում են երկու բաղաձայնով սկսվող օտարազգի բազմաթիվ բառեր և մանավանդ հատուկ անուններ, որոնք արտասանվում են գրեթե առանց միջանկյալ ը-ի, ինչպես՝ կրոն.

տրանսպորտ, դրամա, սխեմա. սիուալստիկ, պրոբլեմ, գրիպ, բլոկ. Բրեստ, Գրյունվալդ, Դրեզդեն, Շվեդիա և այլն: Աչսպիտի հնչումը, անշուշտ, համա-
ժողովրդական չէ, այլ հատուկ է արևելահայ գրական արտասանությանը
միայն:

3. Նույնը կարելի է ասել և այն օտարազգի բառերի վերաբերյալ, որոն-
ցում հայերենի տեսակետից անկապակցելի երեք և շորս բաղաձայնների զու-
գորդությունները բառամիջում արտասանվում են առանց գաղտնավանկի,
ինչպես՝ էֆտագ, գանգստեր, էֆկուրսիա, էֆսպրես, աքստրահում, սպորտ-
սմեն, կոնսպեկտ, Ավստրալիա, Վիշնևսկի և այլն, մի բան, որ դարձյալ հա-
կասում է հայերենի արտասանական ավանդական օրինաչափություններին:

4. Հայերենի համար անսովոր էին մի վանկի մեջ մտնող այնպիսի հնչյու-
նակապակցություններ, ինչպես՝ մֆ, պֆ, բֆ, բվ, յֆ, նս, նշ, նա, պա, կտ,
ոն, աշ, լս, լմ, լա (առհասարակ լ+որևէ բաղաձայն), որոնք այժմ սովորական
են դարձել, օրինակ՝ Շվարցկոպֆ, Յիսլֆ, տորֆ, ամորֆ, Բենկենդորֆ,
ռեզերվ, կոնֆերանս, Հանս, ցենզ, ռեանչ, ասպիրանտ, դիպլոմատ, էվկա-
լիպտ, օբյեկտ, տակտ, ակտ, կոնցենն, ցիստեոն, մոդեոն, մատչ, սկետչ,
վալս, ռելս, ֆիլմ, մոլա, ալտ, վոլտ և այլն: Իսկ այդ նշանակում է, որ բար-
դացել են վանկերի հնչյունական կառուցվածքների տիպերը, առաջացել են
վանկերի հնչյունական կառուցվածքների նոր տիպեր:

5. Հատկանշական է նաև գաղտնավանկի ընդհանուր առմամբ թուլանա-
լու և շատ դեպքերում անհստակ դառնալու երևույթը: Գաղտնավանկի թուլա-
նալու և անհստակ արտասանվելու պատճառով ներկայումս մի շարք բառերում
կամ այն վերացել է, կամ արտասանությունը դարձել է ոչ պարտադիր և կամ
էլ նրա տեղը հաստատուն, կայուն չէ: Այսպես. Ավ. Իսահակյանը գրել է՝

Իմ հոգին տարագիր մի թուղուն՝
Մըրբրկով գարնրված թեաթափ:

Նույնը Պեշիկթաշլյանի մոտ ենք կարդում՝
Տուր ինձ ձեռքդ, եղբայր եմք, մեք,
Որ մըրբրկավ էինք զատված...

Իսկ այժմ բանաստեղծները գրում են մրբրկով, ոչ՝ մ(բ)բ(բ)րկով, զենել
և ոչ՝ գ(բ)ն(բ)ենել, ֆթթել և ոչ՝ ֆ(բ)թ(բ)թել և այլն:

Մի շարք դեպքերում հաստատուն չէ գաղտնավանկի տեղը: Օրինակ. ար-
տասանում են՝ գտն(բ)վել և գտ(բ)նվել, բնկն(բ)վել և բնկ(բ)նվել, բռ(բ)նկվել
և բռն(բ)կվել, պնն(բ)վել և պն(բ)նվել, պատթ(բ)վել և պատ(բ)թվել, ֆստմ(բ)-
նելի և ֆստ(բ)մնելի՝ և այլն:

Գաղտնավանկը թուլանալու արտահայտություն է նաև բառասկզբում սպ,
սկ, ստ, շտ և նման հնչյունակապակցություններից առաջ ը՛ շարտասանելու
միտումը, տարր, անդորր, սովալլուսկ, մրբկածին և այլ բառեր առանց գաղտ-
նավանկի արտասանելու երևույթը:

Գաղտնավանկի անհաստատ արտասանությունը և մանավանդ նրա տեղի
անկայունությունը իրենց արտահայտությունն են գտնում տողադարձի ժա-
մանակ վերականգնվող լք-ի դեպքում: Այսպես, օրինակ՝ տողադարձելիս գրում
են զրտ-նրվել և զր-տրնվել, բրո-նրկված և բրնկ-ված, ձեռ-նրտու և ձեռնը-

1 Այստեղ և այսուհետև քերված օրինակներում նշվում է այն գաղտնավանկը, որի մասին
սվյալ դեպքում խոսվում է:

տու և այլն, իսկ հաճախ գազանավանկ է ստեղծվում արհեստական կերպով այնտեղ, որտեղ այն չկա: Օրինակ՝ հան-ձրենախումբ, բացա-արբել, ըն-տրբել, հրհր-վանք, հասկա-ցրենել, խազարս-կիզր, սկըզ-ըում և այլն, մանավանդ փոխառյալ բառերում՝ ըս-լավոնական, ըս-ցենար, ըս-պոբարենկերություն, մա-սըշտար, Շե-քրսպիր, միհիս-տրբություն և այլն (օրինակները մեծ մասամբ մամուլից են):

Առհասարակ օտար բառերի վանկատումը չպետք է հարմարեցնել հայերենի վանկատման կանոններին: Եթե օտար բառը հիմնավորապես մտել է հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ, մերվել է լեզվին և յուրացվել է ամբողջ ժողովրդի կողմից, ապա այդպիսի բառերն, անշուշտ, կարտասանվեն հայերենի արտասանական օրինաչափություններով: Իսկ եթե բառի օտար լինելը խիստ զգալի է, ապա դրա հայկական ձևով արտասանությունը մի շարք դեպքերում ստացվում է բավականաչափ արհեստական, ինչպես երբեմն արտասանում են՝ կռն(ը)սպեկտ, ս(ը)խեմա և այլն: Այս իմաստով հետաքրքրական և ուշագրավ է այն փաստը, որ դեռևս Այտընյանը գրում էր. «նույնաչափ ավելի խորթ է՝ թե տողադարձի և թե հասարակ գրության մեջ արևմտյան օտար բառերու մեջ ը խառնելով նոր վանկ մ'ավելցնել. զորօրինակ՝ ըԱպարտա, ըՍթրոմպոլի, ըսլավ, ըՋվիցցերի, ըբրամ, ըըռոմ, Գըրիգոր, Քըրիստոս, Քըսերքսես, Կոլտըշմիտ»²:

Պետք է ասել, որ տողադարձի ժամանակ ը ձայնավորի գործածության մեջ թույլ տրվող ազատությունը և նրա շարաշահումը, երբ հաշվի չի առնվում բառի ճիշտ արտասանությունը և, երբեմն նույնիսկ միայն տպագրական հնարավորությունների պատճառով ը է գրվում այնտեղ, որտեղ այն ամենևին չի արտասանվում, գրի ունեցած ներկայիս ուժեղ ազդեցության պայմաններում կարող է գրական արտասանությունը մեծ վնաս հասցնել:

Եթե չափածոյում ֆաղտնավանկի կազմության որոշ ազատություն է դիտվել (օրինակ, մհրիկ, փթթել, ստբուկ և այլ բառեր ըստ բանաստեղծության չափի մի տեղ հաշվել են որպես երկվանկանի բառ, մի այլ տեղ՝ եռավանկ)³, ապա դա պետք է անընդունելի համարել ժամանակակից հայերենի գրական արտասանության տեսակետից:

6. Արտասանական մյուս նոր առանձնահատկությունը վերաբերում է ձայնավորային հանդիպումների արտասանությանը: Հայտնի է, որ հնում երկու ձայնավորների միջև հորանջից խուսափելու համար որպես կանոն մտել է որևէ ձայնակապ՝ յ, վ կամ հ, օրինակ՝ Միքայել, փարավոն, Գեվորգ, օվազիս) (այժմ՝ ուսերենի նմանողությամբ՝ օազիս), Աբրահամ, գեհեն, զարավուլ և այլն: Մինչդեռ բազմաթիվ նոր փոխառություններում երկու և երեք ձայնավորային կապակցությունների արտասանությունը սովորական է և որևէ արտասանական դժվարություն չի հարուցում, ինչպես՝ աոբաա, կաուչուկ, կակաո, աուլ, բոա, ռաուդ, կոալիցիա, Աուստերլից, կաոս, կաուրա, Ասուան, Բրաունենշտայն, մառիզմ:

Ժողովրդա-խոսակցական լեզվում երբեմն հանդիպող կակավո, կավուր, ավուտ, քավոս, կլովուն, կավուչուկ և նման արտասանությունները հայերենի

² Ա. Այտընյան, Քննական քերականություն, աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 348:

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933:

արտասանական հին ավանդույթի արտահայտություն են, որն այժմ դիտվում է որպես շեղում գրական արտասանության նորմայից:

7. Օտար բառերում կից ձայնավորներն առանց ձայնակապի հնչելու արտասանական նոր ունակությունը և մանավանդ գրային արտասանությունը, մեր կարծիքով, որոշ շափով թուլացրել է և կից ձայնավորներ ունեցող բառերի մեջ ձայնակապի արտասանությունը այն դեպքերում, երբ ձայնակապը չի գրվում, ինչպես, օրինակ՝ հրեական, հրեերեն, քաղաքացիական, գյուղացիական, օղաշուական, քաղքենիություն, ծիարշավ, միօրինակ, միանգամանի, մարգարեական, հիանալի և այլն, որոնցում ձայնակապը կամ արտասանվում է շատ թույլ կամ բոլորովին չի արտասանվում:

8. Բավականաչափ լայն տարածում ստացած արտասանական նոր առանձնահատկություն է դ, տ, թ ատամնային պայթականների ուժեղ քմայնացումով կամ փափկացումով արտասանությունը առաջին շարքի ձայնավորներից (ե, ի) և հատկապես յ միջնալեզվային հնչյունից առաջ: Այստեղ, անշուշտ, ակնհայտ է ուսերենի փափուկ հնչյունների ազդեցությունը: Այդ երևույթը, նախ և առաջ կարելի է դիտել փոխառյալ բառերում և հատուկ անուններում, ինչպես՝ ռադիո, կոմեդիա, ստադիոն, ռադիոս, դյուշես, ստուդիա, էտյուդ, կոստյում, սայուարդես, Սանայագո, Գոտյե և այլն⁴:

Հայերեն ոչ փոխառյալ բառերում դ-ի և տ-ի քմայնացում ե, ի ձայնավորներից առաջ ընդհանուր առմամբ չի դիտվում, եթե չհաշվենք օտարաբան արտասանության այն մասնակի դեպքերը, երբ արտասանում են դասծիրարակիլ (դաստիարակել), արձիական (արդիական), նույնիսկ՝ ձիակ (դիակ), ծիեզերք (տիեզերք), ամենակալ (ատենակալ), սնոծիապաշտ (սնոտիապաշտ) և այլն: Վերջին երևույթը խիստ սահմանափակ բնույթ ունի և նկատվել է բացառապես ուսուսուսների մոտ:

Ոչ փոխառյալ բառերում ավելի ակնբախ է դ, տ, թ հնչյունների ուժեղ քմայնացումը յ կիսաձայնից առաջ, ինչպես՝ Արարատյան, մատյան, առավոտյան, Ավետյան, գորդյան, Սևորդյան, արդյունավետ, արդյունք, Դավթյան և այլն: Հատկապես տարածված է թ հնչյունի քմայնացումը ություն ածանցում, որը շատ դեպքերում արտասանվում է գրեթե ց-ի նման:

9. Արտասանական նոր առանձնահատկություն է լ ձայնորդի փափուկ արտասանությունը այնպիսի հնչյունադիրքում, որտեղ այն պետք է կոշտ արտասանվի: Հայերենում ընդհանրապես լ-ն փափուկ է արտասանվում ե, ի ձայնավորներից և յ ձայնորդից առաջ, ինչպես՝ ալեհեր, ալիք, ալյուր և այլն և կոշտ՝ մյուս ձայնավորներից ու բոլոր բաղաձայններից առաջ, ինչպես՝ սալոր, գլան, բլուր, շղիկ և այլն: Ներկայումս հայերենի արտասանական այդ օրինաչափությանը հակառակ՝ փոխառյալ բազմաթիվ բառերում և հատուկ անուններում ուսերենի նմանողությամբ շատերը արտասանում են փափուկ լ, ինչպես՝ վալս, մոլտ, ալբոմ, բոլշևիկ, կուլտուրա, ալմանախ, ամալգամ, Բալզակ, Բալմոնտ, Վոլտեր, Մալա, Մալցե և այլն: Հայերենում լ-ի և առհասարակ մյուս հնչյունների փափուկ կամ կոշտ արտասանությունը էական կամ տարբերակիչ հատկանիշ չէ, որովհետև հայերենում շկան երկու այնպիսի բառեր, որոնք տարբերվեն իրարից միայն լ-ի փափուկ և կոշտ հակադրությամբ,

⁴ Նշված օրինակներում իո, իա, իու, եո ձայնավորական կապակցությունները վեր են ածվում երկհնչյունների՝ յո, յա, յու, յո, և յ կիսաձայնի ազդեցությամբ նախորդող բաղաձայնների ենթարկվում են քմայնացման:

ինչպես ուսերենում (հմմտ. мѣл «կավիճ» և мѣлѣ «ծանծաղուտ»), որտեղ փափուկ և կոշտ լ հնչյունները հանդես են գալիս որպես առանձին հնչույթներ և տարբերակում բառեր: Հետևաբար, փոխառյալ բառերում լ-ի փափուկ արտասանությունը չի շոշափում հայերենի հնչույթային համակարգը: Եվ քանի որ նշված կարգի բառերում լ-ի փափուկ արտասանությունը դրական հայերենում ընդհանրանում է, ուստի այդ նոր առանձնահատկությունը սկսում է որոշ փոփոխություն առաջ բերել լ-ի դիրքային տարբերակների հարցում:

10. Արտասանական ամենաաչքի ընկնող նոր առանձնահատկությունը հայերենում գրային արտասանության ծավալումն է, որը մեծ թափ ստացավ հատկապես 20-ական թվականներից հետո:

Ուղղագրական և արտասանական օրինաչափությունների վերականգնումը մեծ մասամբ ընթանում է արտասանական այն նոր տարբերակների ամրացման ճանապարհով, որոնք համապատասխանում են գրությունը: Արտասանական այսպիսի տարբերակների առկայությունը լեզվի հնչյունական համակարգը չի շոշափում, այլ վերականգնում է օրինաչափ համապատասխանությունը արտասանության և ուղղագրության միջև: Այս երևույթը ընդհանուր առմամբ պետք է համարել և՛ նպատակահարմար, և՛ առաջադիմական:

Ներկայումս գրային արտասանությունը այնպիսի տարածում է ստացել և շատ դեպքերում այնպես է արմատավորվել, որ այն պետք է դիտել որպես իրողություն:


Նախահեղափոխական շրջանում բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների որոշակի դիրքերում կրած փոփոխությունը, որը հանդես էր գալիս որպես կանոն, այժմ մի շարք դեպքերում բնութագրվում է միայն տակավաթիվ օրինակներով: Այսպես, օրինակ, դ-ից հետո ձ-ի՝ ց արտասանելու կանոնին այժմ ըստ էության ենթարկվում են միայն դեղձ, դաղձ, դեղձան, մասամբ՝ դեղձակի բառերը, իսկ իղձ, առաղձ, մաղձ, ըղձական, մղձավանջ, քաղձանֆ, առաղձ և այլն բառերը այժմ գերազանցապես արտասանվում են այնպես, ինչպես գրվում են: Բազմաթիվ բառեր, որոնցում ձայնեղ հնչյունը արտասանվում էր շնչել խուլ, ներկայումս հաստատուն կերպով արտատանվում են գրության ձևով, ինչպես՝ հաջող, աշակցել, ընդմիջում, արեգակ, խաղախ, հորձանք, օգոստոս, մերձավոր, տեսմերձ, հրդեհ, արդի, զուգահեռ, հարգել և այլն:

Հատկապես նորակազմ բառերը հակում ունեն արտասանվելու ըստ գրության, ինչպես՝ արգելավազք, զուգափայտեր, մեներգ, նրբանցք, ամբարձիչ և այլն (հմմտ. արգելել(ք), ղուլգ(ք), երգել(ք) նուրբ(փ)):

Հայոց լեզվի զարգացման ներկա էտապում հատկանշական է այս կարգի բառերի համար արտասանական տարբերակների առկայությունը, որն անխուսափելի երևույթ է մեր լեզվի զարգացման ներկա փուլում, օրինակ՝ նվազել(ք)-նվազել, միջակ(չ)-միջակ, ֆջնել(չ)-իջնել, միջաղգային(չ)-միջաղգային, ներբող(փ)-ներբող. անընդհատ(թ)-անընդհատ և այլն:

Սա, իհարկե, չի նշանակում, թե պետք է գիտակցաբար կամ անփութորեն խախտել ավանդաբար մեզ հասած շատ բառերի արտասանությունը, ինչպես՝ մառդ, վառդ, կարգ, օձ, օղ, աղդեն, երբեք և այլն, որը դիտվում է ուղղախոսական նորմայի խախտում:

11. Հայերենում ներկայումս գրային կամ գրքային արտասանության միտումը դրսևորվում է ո՛չ միայն այստեղ: Հայտնի է, որ և՛ն բառամիջում և բառավերջում, մանավանդ Բ-ից հետո, արտասանվում է շատ թույլ կամ բոլորով



վին չի արտասանվում, օրինակ՝ խորհուրդ, շնորհալի, շնորհակալություն, արհամարհել, շնաշխարհիկ, Հովհաննիսյան և այլն:

Նկատելի է, որ գրային արտասանություններն ընդհանուր միտումը այստեղ ևս արդեն սկսել է որոշ դեր կատարել: Ներկայումս շատերի մոտ բավականաչափ պարզորոշ այս կարգի բառերում հ-ն արտասանվում է:

12. Այնուհետև, նկատելի է, որ զգալիորեն կրճատվել են բաղաձայնների առնմանական և տարնմանական փոխազդեցությունները, որի հետևանքով մի շարք բառեր, ինչպես՝ բավբակ, ամբողջ, ամփոփել և այլն, որ շատերի կողմից տարնմանությամբ արտասանվում էին որպես բանբակ, անբողջ, անփոփել և հակառակն՝ անբիծ, անպետք, անբասիւր, անպայման և այլն, որ առնմանությունամբ արտասանվում էին ամբասիւր, ամբիծ, ամպետք, ամպայման, այժմ գերազանցապես պահպանում են իրենց գրային արտասանությունը:

Ընդհանուր առմամբ նշենք, որ հթհ 20—30-ական թվականներին հայերեն գրական արտասանության մեջ աչքի էր ընկնում տարբրայնությունն ու ազատությունը, երբ ընդունված էր գրել և արտասանել Մասկվա, կամունիստ, սավետական, պամիդոր, դիֆիցիտ և այլն, ապա 40-ական թվականներից հետո, մանավանդ վերջին շրջանում, նկատելի է գիտակցական վերաբերմունք և բավականաչափ խնամք և ուշադրություն հայերենի ուղղախոսության նկատմամբ:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հատկանշական է նաև ազատագրումը նեղ բարբառային արտասանական առանձնահատկություններից:

Արտասանական շատ նոր երևույթներ ներկայումս թեև չունեն համաժողովրդական նշանակություն և մրցում են դեռևս արտասանական ավանդական նորմաների հետ, բայց ուշադրության արժանի են և կարոտ լուրջ գիտական ուսումնասիրության:

ՀՄՄՀ ԳԱ լեզվի ինստիտուտը ձեռնարկել է հայերեն գրական արտասանության գիտական ուսումնասիրությունը, որը մի փորձ կլինի նկարագրելու և ներկայացնելու ժամանակակից հայերեն գրական լեզվի արտասանությունը իր հիմնական գծերով, այսինքն՝ այն արտասանությունը, որը հատուկ է մեր օրերում գրական լեզվին տիրապետող մարդկանց: Այսպիսի ուսումնասիրությունը, անշուշտ, մեծ չափով կնպաստի ժամանակակից գրական հայերենի ուղղախոսական նորմաների որոշման և հաստատման գործին:

Ժամանակակից գրական լեզվի արտասանությունը նկարագրելիս անպայման հաշվի կառնվեն այն փոփոխությունները, որոնք կրել է հայերենը հայոց լեզվի զարգացման վերջին մի քանի տասնամյակների ընթացքում, ինչպես և ցույց կտրվեն այն էական շեղումները, այսինքն՝ այն ուղղախոսական թերությունները և արատները, որոնք նկատվում են ժամանակակից գրական լեզվի արտասանության մեջ:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ արտասանական համակարգի լիակատար միասնականացումը առհասարակ անհնարին է և անիրագործելի, քանի որ լեզուն որպես անընդհատ զարգացող ու փոփոխվող մի երևույթ, ամեն մի սովորյալ փուլում իր մեջ պարունակում է և՛ մեռնողը, և՛ զարգացողը: Այդ պատճառով լեզվում գոյություն ունեցող արտասանական որոշ տարբերակներ, որոնք արդյունք են տարիքային և սոցիալական տարբերությունների, պետք է համարել անխուսափելի և օրինաչափ: Միաժամանակ պետք է մերժել ամեն տե-

սակի բարբառային և ժարգոնային դրսևորումները գրական արտասանության մեջ:

Գրական լեզվին հատուկ են ոչ միայն բառային, բերականական, ուղղա-
դրական, այլև արտասանական նորմաներ: Եթե գրավոր լեզուն ունի իր ուղ-
ղագրական կանոնները, ապա բանավոր խոսքին հատուկ են ուղղախոսական
նորմաներ: Եվ որքան բարբառային տարբերակումները մեծ տեղ են գրավում,
այնքան ավելի կարևոր է դառնում լեզվի միասնական ուղղախոսական նորմա-
ների մշակումը:

О НЕКОТОРЫХ НОВЫХ ПРОИЗНОСИТЕЛЬНЫХ ОСОБЕННОСТЯХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Т. А. КАРАГУЛЯН.

На основе исследования орфоэпии современного армянского языка выявлены некоторые новые произносительные особенности, которые характерны для современного армянского языка.

Изменения в произношении, возникшие в течение последних 5—6 десятилетий рассматриваются в взаимосвязи внутренних и внешних факторов армянского языка.

В фонетической системе армянского языка существенных изменений не произошло. Новые произносительные особенности или навыки касаются орфоэпических норм современного армянского литературного языка.